Зոր գայլակերպիկաներ ոսկրոցը

Руслан Сагабалян

Школа семи галактик

Ռուլան Սաղաբալյան

Յոթ գայլակրիկաձագերի դարոցը

Թարգմանությունը ռուսերենից՝
Հայկ Հարությունյանի

ԵՐԱՉ
newmag
Երևան
2025

ՀՏԴ 821.161.1–93 Սաղաբալյան
ԳՄԴ 84(2)–44
Ս 160

Սաղաբալյան Ռուլան
Ս 160 Ցոթ գալակտիկաների դպրոցը / Ռ. Սաղաբալյան.– Եր.: Newmag, 2025.– 132 էջ:

Գրքի երազկոտ հերոսը հայտնվում է տիեզերական դպրոցում, որը նման է մեր երկրային դպրոցներին: Սակայն այս դպրոցում սովորում են յոթ գալակտիկաների ներկայացուցիչներ՝ տարբեր արարածներ, որոնք օժտված են բացառիկ ունակություններով: Նրանք ընկերանում են և միմյանց օգնում դժվար իրավիճակներից դուրս գալ: Ցոթ գալակտիկաների դպրոցի աշակերտները մշտապես հայտնվում են անհավատալի իրավիճակներում և ամեն անգամ հաղթահարում են արգելքները՝ խելամտության, համառության, հավատարմության, երևակայության և երազելու շնորհիվ: Նրանց արկածներն ամփոփված են հեղինակի այս արտասովոր գրքում, որը նախատեսված է 9 տարեկանից բարձր երեխաների համար:

Գիտ. նախատեսված է 9–12 տարեկան երեխաների համար:

ՀՏԴ 821.161.1–93 Սաղաբալյան
ԳՄԴ 84(2)–44

ISBN 978–9939–967–86–8
Ռուլան Սաղաբալյան «Ցոթ գալակտիկաների դպրոցը» © 2025,
«Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ–ին: Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:

«Երազ» մատենաշարի գործընկեր
YERAZ PROJECTS

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից 7

Նորեկը 10

Կանաչ բոժոժը 18

Աշխարհի ամենագեղեցիկ դինոզավրը 32

Մարդակերը 46

Բաց դռների օր 66

Սանիտարական օր 78

Հասունության վկայականը 88

Կապույտ աշակերտը 98

Նպատակը 114

Թոռներիս՝ Անիին ու Լեոյին

Հեղինակի կողմից

Շատ վաղուց, ուսանողական տարիներիս, երբ չէի սիրում նույն տեղում երկար մնալ ու ամեն հարմար առիթով մի տեղ ուղևորվում էի, արձակուրդներից առաջ մտա Վերոֆլոտի տոմսարկղ (այլ ավիաընկերություններ այդ տարիներին, ինչպես հասկանում եք, մեզ մոտ չկային), որպեսզի հորիզոնից այն կողմ որևէ ուղղությամբ ուսանողական զեղչով տոմս գնեմ: Եվ ահա, հերթի մեջ մի տղայի տեսա՝ ոտնաթաթերին կանգնած ձգվել էր դեպի տոմսարկղի պատուհանը, որից այն կողմ նստած էր կապույտ համազգեստով տոմսավաճառուհին: Տղան հարցրեց նրան՝ կարելի՞ է տոմս գնել դեպի այնտեղ, որտեղ գտնվում է տիեզերական դպրոցը: Տոմսավաճառուհին հետաքրքրված հարցրեց.

— Ի՞նչ-ի՞նչ, դա ի՞նչ դպրոց է:

— Տիեզերական,– կրկնեց տղան:

— Այդպիսի դպրո՞ց կա:

Տղան շատ վստահ գլխով արեց և ավելացրեց, որ այնտեղ սովորում և ընկերություն են անում իրարից շատ տարբեր էակներ՝ ամենատարբեր հեռավոր վայրերից՝ նույնպես տիեզերական:

— Դա ի՞նչ է, Տիեզերագնացների դպրո՞ց:

— Ոչ միայն: Այնտեղ ամեն ինչ են սովորեցնում:

— Իսկ ո՞ր քաղաքում է քո այդ դպրոցը,– հարցրեց կինը:

Տղան ասաց, որ չգիտի, բայց հույս ուներ, որ տոմսարկղում կասեն:

— Իսկ այդ ի՞նչ էակներ են հեռավոր վայրերից: Տարբեր ազգությունների՞ց են, հա՞,– հարցրեց տոմսավաճառուհին:

— Իրարից բոլորովին տարբեր էակներ են,– պատասխանեց տղան,– նրանք ընկերություն են անում, օգնության հասնում իրար ու հենց այնտեղ էլ ապրում են:

Կինն ուսերը թոթվեց:

— Գիշերօթի՞կ է, ուրեմն տիեզերակա՞ն, այդպիսի դպրոց ես չգիտեմ: Ինչի՞դ է պետք: Իմ տղան շատ լավ դպրոցում է սովորում, մեր քաղաքում:

— Չէ,– ասաց տղան,– ես էլ եմ քաղաքի դպրոցում սովորում (ու տվեց այն դպրոցի անունը, որտեղ ձեր խոնարհ ծառան էլ էր սովորել), ինձ հենց տիեզերական դպրոցն է պետք:

Հերթը մեծանում էր, անհանգիստ ալիք անցավ շարքի միջով, մարդիկ հոգնել էին սպասելուց:

— Այսպես անենք, տղա՛ս, այնտեղ, պատին, այն քաղաքների ցանկն է, ուր մեր օդանավերը թռչում են: Եթե այդ ցանկում քո այդ քաղաքը գտնես, ծնողներիդ հետ արի, միևնույն է, առանց նրանց քեզ տոմս չեմ վաճառի:

— Բայց ես փող ունեմ,– ասաց տղան:

Պատասխանն անբեկանելի էր:

— Անչափահասներին տոմս չենք վաճառում, միայն անձնագրով:

Տղան շփոթված գլխով արեց, մի քիչ մնաց տեղում կանգնած ու հարցրեց.

— Իսկ տոմսերը միայն մե՞ր երկրի քաղաքների են:

— Իսկ դու, ի՞նչ է, անպայման արտասահմա՞ն ես ուզում գնալ կամ գուցե այլ մոլորա՞կ:

— Տիեզերական մենք դեռ չունենք,– հերթից ծաղրեց ինչ-որ մեկը:

— Զվարճալի երեխա է,– ժպտացին մարդիկ,– մի կողմ անցիր, տղա՛ս, մի՛ խանգարիր հերթին:

Տարօրինակ տղան դուրս եկավ հերթից, մոտեցավ պատին և սկսեց ուսումնասիրել չվերթների ցանկը, հետո հիասթափված հառաչեց և նստեց նստարանին: Նրա դեմքն ինձ ծանոթ թվաց: Կարծես ինչ–որ տեղ տեսել էի նրան: Ոչ այն դպրոցում, որտեղ նա սովորում էր, և որտեղ վերջերս պրակտիկա էի անցնում: Որոշակիորեն ինչ–որ ուրիշ տեղ, իսկ թե որտեղ, չէի հիշում: Ես վերցրի տոմսս, շուռ եկա, որ տղայի կողքին նստեմ, հայացքով նրան փնտրեցի, բայց նրա հետքն էլ արդեն չկար: Հետագայում ես նրան երբեք չեմ տեսել, բայց շատ եմ հիշել այդ դրվագը տոմսարկղի մոտ:

Ինձ թվում է՝ նա սեփական երազանքի հետևից էր վազում: Այն երազանքի, որին ինքը հավատացել էր: Այդպես պատահում է: Չէ՞ որ ցանկացած երազանք այս կամ այն կերպ կապված է իրականության հետ: Անպայման կապված է: Երևակայությունը ծնվում է գլխում, իսկ գլուխը լիովին երկրային օբյեկտ է: Մեկը մյուսով սնվում է: Ինչ էլ հուշի քեզ քո երևակայությունը, իմացի՛ր, որ այդ տեսիլքն անպայման մի տեղ գոյություն է ունեցել, գոյություն ունի կամ պիտի ունենա: Ահա այսպես հայտնվեցին այս պատմությունները, որոնց մի մասն արդեն թարգմանված են տարբեր լեզուներով: Եվ քանի որ ամեն երևակայություն միաժամանակ նաև իրականություն է, ապա 7 գալակտիկաների դպրոցն ինչ–որ տեղ, տիեզերքում, պետք է որ գոյություն ունենա, չի կարող գոյություն չունենալ, ընդ որում, մեզնից ոչ այնքան հեռու, գրեթե մեր կողքին: Ինքս չեմ կասկածում ու ձեզ էլ խորհուրդ եմ տալիս չկասկածել:

Նորեկը

Աստղագիտության դաս էր: Հանկարծ դասարանի դուռը բացվեց, և հայտնվեց տնօրենը, իսկ նրա հետ՝ բարձրահասակ, նիհար, մի փոքր կորացած մի արարած, որը շատ նման էր լոբու պատիճի: Բոլորս վեր թռանք մեր տեղերից, բայց, իհարկե, ոչ թե պատիճի, այլ տնօրենի պատճառով:

— Նստեք,– ասաց նա,– ես նորեկի եմ բերել: Նա Կոկոս մոլորակից է և սովորելու է մեր դպրոցում,– ապա հայացքով տնտղեց դասարանը, նկատեց ազատ տեղ իմ կողքին և նորեկին կարգադրեց նստել այդտեղ:

Նա հնազանդ գլխով արեց, մոտեցավ, նստեց ու քաղաքավարի ասաց.

— Բարև Ձեզ, միջմոլորակային դպրոցի հարգելի՛ աշակերտ:

— Ողջույն, հարգելի՛ նորեկ,– նրա տոնով պատասխանեցի ես:

Տղաները, հասկանալի է, շրջվեցին: Նորեկը չափից դուրս բարեկիրթ էր. կարճ ձեռքերը խնամքով ծալել էր գրասեղանի վրա, աչքերը մի փոքր կկոցած նայում էր ուսուցչին, ինչպես դիպուկահարը՝ թիրախին, և իր ամբողջ տեսքով ծայրահեղ հնազանդություն էր արտահայտում:

— Ինձ լսեք,– ասաց մեր աստղագիտության ուսուցչուհին, ցուցափայտով թեթևակի հպվելով հեռուստացույցի լուսարձակող էկրանին,– նորեկի հետ կհասցնեք ծանոթանալ դասամիջոցին...

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark